




ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՂԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՎԱՅԻՆ
ՂԱՄԱՍԱՐԱՆ

**Մեր Համալսարանը
հնի և նորի համալիր
գաղափարակիրն է**

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ԴԻՊԼՈՄԸ ԿՐԿԻՆ ՃԱՆԱԶԿԵՑ ՀԱՄԱՐԺԵՔ ՖՐԱՆՍԻԱԿԱՆԻՆ



Տարին ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում սկսվեց կարևոր իրադարձությամբ և, առհասարակ, տարին լուրջ ձեռքբերումներով ամփոփելն ու հեռանկարային նախագծերով մեկնարկելն արդեն պլանդույթ է:

Այս տարի նույնպես. հունվար ամսին հայտնի դարձավ, որ մեր համալսարանի ճարտարապետի հայկական դիպլոմը, առաջիկա 5 տարիների համար ընդունված որոշման համաձայն, կրկին ճանաչելի է Ֆրանսիայում և հավասարազոր՝ ֆրանսիական պետական դիպլոմին: Նշենք, որ մեր համալսարանի դիպլոմը դեռևս 1994թ-ից է ճանաչելի Ֆրանսիայում, ինչի արդյունքում շրջանավարտ ճարտարապետները վստահորեն մուտք են գործում բարեկամ Ֆրանսիա՝ մասնագիտական մեծ հեռանկարի ակնկալիքով:



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ ՎԱԼԵՆՏԻՆԱՅԻ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԻ ՀԵՏ

Մենք ուժեղ և մրցունակ ենք մեր միջազգային կապերով, առաջատար համալսարանների հետ համագործակցության պայմանագրերով ու փոխադարձ այցերով: Տարվա մեկնարկից հետո մեր համալսարանից տարբեր պատվիրակություններ հասցրեցին լինել մի շարք երկրներում, հանդես գալ դասախոսություններով և վերադառնալ թարմ պայմանագրերով, համաձայնագրերով ու մրցանակներով:



Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտոր Գագիկ Գալստյանը, ՃՀՀՀ-ի ֆինանսական գծով պրոռեկտոր Մարինա Ղազարյանը և ՃՀՀՀ-ի որակի ապահովման կենտրոնի ղեկավար Վարազդատ Յովհաննիսյանը, «Էրազմուս+» նախագծի HERITAG ծրագրի շրջանակներում, Վալենտինայի Պոլիտեխնիկական համալսարանի հետ կնքեցին համաձայնագիր, ըստ որի կիրականացվի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի փոխանակում և հնարավորություն կտա մշակութային ժառանգությանն ու գոեինֆորմացիոն տեխնոլոգիաներին վերաբերող նախագծի կառավարման ոլորտում ստանալ երկաստիճան կրթական որակավորում:



ՄԵՐ ԵՎ ՉԵՍՏՈՅԻՆ ԶԱՄԱՆԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՆՔԵՑ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ



Հետագա համագործակցության խնդիրներ քննարկվեցին նաև Լեհաստանի Չեստոհովա քաղաքի Տեխնոլոգիական համալսարանի հետ, ուր մեկնել էին ռեկտոր Գագիկ Գալստյանը և Քաղաքաշինության ամբիոնի վարիչ Չառա Մամյանը: Մեր համալսարանի պատվիրակությունը Չեստոհովայի համալսարանում հանդես եկավ նաև զեկույցներով՝ Գագիկ Գալստյանը՝ «Հայաստան. Շինարարական գործունեություն՝ երեկ, այսօր, վաղը», իսկ Չառա Մամյանը՝ «Հայաստան. Քաղաքաշինական գործունեություն՝ երեկ, այսօր, վաղը» թեմաներով:

ԿԼԵՐՄՈՆ ՖԵՐՐԱՆՈՒՄ ՀԱՆՂԵՍ ԵԿԱՆՔ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ

Միջազգային Ցակրբուն ուսանողական համատեղ աշխատանքներին մասնակցելու և դասախոսություններ կարդալու համար Ֆրանսիայի Կլերմոն-Ֆերրանի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոց էին մեկնել ՃՇՀԱՀ-ի Քաղաքաշինության ամբիոնի պրոֆեսոր Գուրգեն Մուշեղյանը և ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի վարիչի Ժ.պ., դոցենտ Էմմա Հարությունյանը:



«ЗОЛОТАЯ АРХИДЕЯ»-Ի ԴԻՊԼՈՄՆԵՐԸ՝ ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

Արտագնա ուղևորությունների մեկնած մեր համալսարանականները երբեք դատարկածեռն չեն վերադառնում: Ռուսաստանի Տյումեն քաղաքի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում անցկացված միջազգային ամենամյա «Золотая Архидея» ճարտարապետական նախագծերի մրցույթին մեր համալսարանից ներկայացված 13 աշխատանքներից 6-ն արժանացան 1-ին և 2-րդ կարգի դիպլոմների:



ՄԵՆՔ՝ «ՀԱՅԿՅԱՆ-2016»-Ի ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Մեր համալսարանին էր նաև Հայաստանի երիտասարդական հիմնադրամի՝ արդեն ավանդական դարձած «Հայկյան» մրցանակաբաշխության «Ռազմահայրենասիրական լավագույն նախագիծ» անվանակարգում ներկայացված մրցանակը:

Այս տարի ՀՀ զինված ուժերի կազմավորման 25-ամյակին նվիրված մրցանակաբաշխությանը մեր համալսարանի Ուսանողական խորհուրդը ներկայացել էր «Հայերի հաղթանակի ուղին» ծրագրով:



ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ

Գործընկեր համալսարանների և կազմակերպությունների շրջանում մեր համալսարանն աչքի է ընկնում իր հյուրընկալությամբ, նոր համագործակցությունների, նախագծերի իրականացման պատրաստակամությամբ:



Հենց նման առաջարկով էլ մեր համալսարան էին այցելել Նիդերլանդների «Մեկանո» ճարտարապետական ընկերության ճարտարապետ Պոլինա Ստրուկտովան և «The Business and Knowledge Society» կազմակերպության նախագահ Գարի Ղազարյանը: Հայաստան, և, հատկապես, մեր համալսարան այցը նպատակ ուներ համագործակցության եզրեր գտնել՝ ճարտարապետական նոր լուծումներով կառույցներ, բնակարաններ և ծրագրեր իրականացնելու բնագավառում:

ՃԵՀԱՅ-ՈՒՄ ԵՆ ԿԼԵՐՄՈՆ ՖԵՐԱՆՏԻ ԵՎ ԿՈՐՈՆԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՏԿԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հյուրընկալեցինք նաև Ֆրանսիայի Կլերմոն Ֆերանի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի և Իսպանիայի Կորունիայի համալսարանի պատվիրակություններին: Եվրոպացի դասախոսների և ուսանողների այցի նպատակն ամենամյա համատեղ աշխատանքային շաբաթին մասնակցությունն էր, իսկ արդյունքը՝ Գյումրիի Թումո տեխնոպարկի վերակառուցման և արդիականացման նախագծերը ժյուրիի դատին հանձնումը:



“ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՆ” ՄՈՂԵՆԵՐՆ ԱՄՓՈՓԵՑԻՆ ԿԱՏԱՆՈՂՈՒ

Դեռևս 2 տարի առաջ էր, երբ մեր համալսարան հատուկ առաքելությամբ և առաջարկով այցելեց ռուսաստանաբնակ հայազգի գործարար, «ՄոնԱրխ» ընկերության սեփականատեր Սերգեյ Համբարձումյանը: Նա նպատակ ուներ մեր համալսարանի անմիջական մասնակցությամբ որևէ հայկական գյուղում յուրատիպ ‘Հայկական տուն’ ստեղծել, որն իր ճարտարապետաշինարարական կերտվածքով ու կենցաղով զբոսաշրջիկին կպատմեր հայի դարավոր մշակույթի ու նիստուկացի մասին: 2 տարի նվիրված աշխատանքից հետո ճանապարհի կեսն անցած է: Այլ. Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում տեղի ունեցավ ‘Հայկական տուն’ նախագծերի կատալոգի շնորհանդեսը, որտեղ ներկայացված էին դասախոսների և ուսանողների մտքից ծնված նախագծերը:



ՖՐԱՆՍՈՒԻՆԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՄԱՆ ՈՐԴԻՆԵՐ ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ

Գաղտնիք չէ, որ մեր համալսարանն առանձնահատուկ վերաբերմունք ունի ֆրանսերեն լեզվի ուսուցման նկատմամբ, իսկ Ֆրանկոֆոնիայի օրերը լավ առիթ են ֆրանսերեն խոսելու, մտածելու, ստեղծագործելու համար:

ՃՀՅԱՀ-ում իրենց մասնագիտական պրակտիկան անցկացնող ֆրանսիացի երկու երիտասարդ ճարտարապետներ Աստրիդ Դյուման և Ֆանտին Պենգոն, Ֆրանկոֆոնիայի երկամսյակի շրջանակներում, ներկայացրեցին իրենց պատկերացումները՝ «Պատմական միջավայրի վերակենդանացում» հնի ու նորի համադրմամբ» թեմայի շուրջ:



ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿԵՑԻՆ «ՀԱՐՑԵՐ՝ ՖՐԱՆԿՈՖՈՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԽԱՂԻՆ

Հայաստանում ֆրանսիական համալսարանում անցկացված «Հարցեր՝ ֆրանկոֆոն ուսանողների համար» խորագրով ինտելեկտուալ խաղին մասնակցեց նաև մեր համալսարանի թիմը՝ գրավելով 3-րդ տեղը:



ԴՊՐՈՑՈՒՄ ՆՇԵՑԻՆ ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԿԱՅԻՆ ՕՐԸ

Ֆրանսերեն լեզվին ու մշակույթին նվիրված տոնից անմասն չմնաց նաև ՃՀՅԱՀ-ի Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցը: 'Cherchez la femme!' /Փնտրեք կնոջը/ խորագիրը կրող միջոցառումը համեմված էր կանացի նոտաներով և նվիրված կանանց միամսյակին: Նրբագեղ կանայք, ճակատագրական կանայք, ում բնութագրում են մեկ բառով՝ ֆրանսուհիներ:



Դպրոցի աշակերտները բեմից՝ փայլուն ֆրանսերենով, հյուրերին տեղափոխեցին ֆրանսիական տարբեր ժամանակաշրջաններ, թատերականացված բեմադրությամբ պատմեցին Ալիենոր Ավիլանտացի թագուհու և ժաննա Դ'Արկի կյանքը, կանայք, ովքեր փոխել են պատմությունը:

ՌԵԿՏՈՐ ԳԱԼՍՏՅԱՆԸ՝ ՌԴ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՊԱՏՎԱԿՈՐ ՀՅՈՒՐ

Ապրիլ ամսին՝ որպես պատվավոր հյուր, ՃՀՀԱՀ ռեկտոր և Շինարարների միության Նախագահ Գաղիկ Գալստյանը Մոսկվայում մասնակցեց Ռուսաստանի Շինարարների միության 10-րդ հոբելյանական համագումարին:



ՀԵՐՈՍ ԱԴԱՄԻ ԱՆՎԱՆ ԿՐԺԱԹՈՇԱԿԸ ՀԱՆՁՆՎԵՑ ԱՐԺԱՆԱԿՈՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Խոսքը՝ գործ Է, հատկապես երբ խոսքը վերաբերում է Հայրենիքին ու Հայրենիքի անձնվեր պաշտպաններին: Այս համոզմունքով ռեկտոր Գաղիկ Գալստյանը դեռևս անցյալ տարի հայտնեց համալսարանի Նախկին ուսանող և Ապրիլյան քառօրյա պատերազմի հերոս Ադամ Սահակյանի անվան կրթաթոշակ սահմանելու մասին: Որոշվեց, որ կրթաթոշակ կտրամադրվի այն 3 ուսանողներին, ովքեր ծառայել են Հայոց բանակում կամ մասնակցել քառօրյա պատերազմին: Հիմք ընդունելով ռեկտոր Գալստյանի մտահղացումը և «Բարեպաշտ սերունդ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշումը՝ ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում ձևավորվեց

մրցութային հանձնաժողով՝ 1-3-րդ կուրսերում սովորող, պարտադիր զինվորական ծառայությունն ավարտած ուսանողների շրջանում:



Մայիսի 6-ին մրցույթն ամփոփվեց և հայտի դարձան կրթաթոշակին արժանացած ուսանողների անունները՝ Շինարարության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Տարոն Հայրապետյան, Զաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող Հայկ Գևորգյան և Ճարտարապետության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Վահան Հարությունյան:

ՄԱՅԱՅԵԼ Է ԱԼԲԵՐՏ ՍՈՒԻԿՅԱՆԸ

Համալսարանը, սակայն, գերծ չմնաց նաև տիտուր ու անդառնալի իրադարձությունից: Մայիսի 8-ին իր մահկանացուն կնքեց ՀՀ վաստակավոր ճարտարապետ, դիզայներ, նկարիչ, քանդակագործ, Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի վարիչ Ալբերտ Սոխիկյանը:

